ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1958 Общественные науки

Գ. Մնեյան

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (1911—1916)

Ստ. Շահումյանի ռևոլյուցիոն գործունեության փառավոր, բայց քիչ լուսաբանված էջերից մեկը՝ դա առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներն են։ Ստ. Շահումյանը, լինելով ՌՍԴԲՊ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարներից մեկը, անդուլ աշխատանք է տանում երկրամասի բանվորների ու գյուղացիների դաշինքը ամրապնդելու, աշխատավորներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով դաստիարակելու գործում։

1914 թ. մարտին Ստ. Շահումյանը՝ ազատվելով Աստրախանի աքսորից (աքսորված էր 1911 թ.), վերադառնում է Բաքու և պարտիայի ու անձամբ Լենինի ցուցմունքով գլխավորում Անդրկովկասի (մասնավորապես Բաքվի) բոլշևիկյան կազմակերպությունները։ Նա մի խումբ բոլշևիկների հետ միասին լարված աշխատանք է կատարում ոստիկանության կողմից ցրած պարտիական ու բանվորական ռևոլյուցիոն կազմակերպությունները վերականգնելու ու ամրապնդելու ուղղությամբ։ Այդ աշխատանքի մասին նա տեղյակ է պահում Լենինին, ստանում է նրանից ցուցմունքներ հետագա գործունեության համար։ 1914 թ. ապրիլին Լենինին գրած նամակում Շահումյանը նկարագրում է այն հսկայական դժվարությունները, որոնք կանգնած էին իրենց առջև։ Բոլշևիկների աշխատանքը ընթանում էր լիկվիդատորների, նացիոնալիստների ու ամեն տեսակի կեղծ սոցիալիստների դեմ մղվող պայքարում։ Վերոհիշյալ նամակում Շահումյանը մատնանշում է, որ մենշևիկները՝ միավորվելով նացիոնալիստների հետ, հովանավորվում են տեղական իշխանությունների կողմից իրենց վարած քաղաքականության համար։ Ունենալով ազատ գործունեության հնարավորություն, բանվորական նախկին միասնական միությունների փոխարեն մենշևիկները այնպիսի միություններ էին ստեղծել, որոնք ամբողջապես համապատասխանում են ոստիկանության և կապիտալիստների շահերին։ Շահումյանը գրում է. «Մենշևիկները կաշվից դուրս են գալիս համոզելու բանվորներին զուտ տնտեսական գործադուլների շահավետության մեջ, գովերգում են կապիտալիստների կողմից տրվող, այսպես կոչված, «պարգևները»։ Ոչ մի հետաքրքրություն չեն ցուցաբերում դեպի բանվորների միասնական կազմակերպությունների ստեղծումը»[1]։ Այնուհետև նա Լենինին հաղորդում է պարտիական կազմակերպությունների միջև կապերի վերականգնման և նրանց աշխատանքի կոորդինացման մասին։ Այդ նպատակով Բաքվի կոմիտեի անդամները ուղարկվում էին Կովկասի բոլոր այն շրջանները, ուր գոյություն ունեին պարտիական անլեգալ կազմակերպություններ։ Ինքը՝ Շահումյանը միշտ լինում էր Թիֆլիսում, Բաքվում և այլ տեղերում և կոորդինացնում պարտիական աշխատանքը։ Այդ մասին նա Լենինին գրում է. «...Ահա մեկ ամսից ավելի է,

[1] *ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, գ. 11։*

ինչ ես Կովկասում եմ։ Լինում եմ մե՛կ Բաքվում, մե՛կ Թիֆլիսում, կամ գավառներում։ Ում հետ հնարավոր ու հարկավոր է տեսնվել եմ... Գործերը կարգավորում ենք, և հույս ունեմ որ մոտակա ժամանակաշրջանում կունենանք հաջողություններ»[1]։ Բանվորների մեջ ռևոլյուցիոն աշխատանքը ծավալելու տեսակետից բոլշևիկները կարևոր նշանակություն էին տալիս մամուլին։ 1914 թ. ապրիլին ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի որոշմամբ Ստ. Շահումյանը ձեռնարկում է «Наша жизнь» բանվորական թերթի հրատարակմանը, որի առաջին համարը լույս տեսավ ապրիլի 22-ին (հին տոմարով)։ Թերթի առաջին համարի առաջնորդողը, որը պատկանում է Շահումյանի գրչին, նվիրված էր բանվորական մամուլի օրվան։ Խոսելով մամուլի դերի ու խնդիրների մասին, Շահումյանը բանվորների ուշադրությունն է հրավիրում պրոլետարական կազմակերպությունների ամրապնդման վրա, վեր է հանում պրոլետարիատի դերը հասարակական կյանքում։ Նա հատուկ ուշադրություն է դարձնում բոլոր դեմոկրատական ուժերի համախմբմանը՝ որպես կարևոր միջոց ռեակցիայի և նացիոնալիզմի դեմ մղվող անհաշտ պայքարում։ «Наша жизнь» թերթի առաջին համարը իրարանցում էր առաջացրել տեղական իշխանությունների մեջ։ Ոստիկանական բաժինները մոբիլիզացրել էին իրենց բոլոր գործակալներին թերթի տպարանը և նրա ղեկավարներին հայտնաբերելու համար։ Բաքվի ոստիկանության բաժնի պետը 1914 թ. օգոստոսի 25-ին դեպարտամենտին ուղարկած գեկուցագրում մատնանշում է, որ Բաքվում հրատարակվող «Наша жизнь» թերթի առաջին համարը ջերմորեն է ընդունվել բանվորների կողմից։ Նա գրում էր. «...Ի լրացումն սույն թվի ապրիլի 24-ի № 2076 զեկուցագրի, պատիվ ունեմ հայտնել Ձերդ գերազանցության, որ համաձայն գործակալության տվյալների «Наша жизнь» թերթը հրատարակվում է Բաքվում գտնվող Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ, որն հայտնի է տեղի սոցիալ-դեմոկրատների շրջանում «Ստեփան» ծածկանունով։ Ըստ գործակալության տեղեկությունների, Շահումյանը հանդիսանում է Կովկասի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկների լիդերը։ Նրա խմբագրությամբ հրատարակվել են «Бакинский Рабочий», «Бакинский пролетарий» և այլ թերթեր, որոնք արգելվել են 1908—1909 թթ.։ 1909 թ. ապրիլի 30-ին տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամների ձերբակալման հետ միասին կալանքի է ենթարկվել նաև Շահումյանը։ 1911 թ. սեպտեմբերի 30-ին տեղական կազմակերպության լիկվիդացիայի կապակցությամբ նորից ձերբակալվել և 1906 թվականի գործող օրենքի հիման վրա աքսորվել է Կովկասի սահմաններից։ «Наша жизнь» թերթի տպարանի հրատարակիչներին հայտնաբերելու համար ձեռնարկված են բոլոր միջոցները, իսկ Շահումյանի վրա նշանակված է խիստ հսկողություն...»[2]։

«Наша жизнь» թերթը հրատարակվում էր բանվորների հավաքած միջոցներով, լույս տեսավ ընդամենը երկու համար։ Տեղի կազմակերպության մեջ խցկված լրտեսների օգնությամբ տպարանը հայտնաբերվեց, և թերթի № 2-ը ամբողջությամբ բռնագրավվեց։ Այդ առթիվ ոստիկանությունը նոր գործ սկսեց Շահումյանի դեմ։ Բայց այդ ռեպրեսիաները չվախեցրեցին բոլշևիկներին։ Նրանք՝ վերակառուցելով իրենց աշխատանքը, անցան ավելի խոր ընդհատակ։

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. № 7, գ. 111։

[2] Տե՛ս Труды Аз. филиала ИМЭЛ, Партиздат, 1948, № 8.

Բոլշևիկների աշխատանքի շնորհիվ 1914 թ. հունիս-հուլիս ամիսներին Բաքվի 40 000 բանվորները գործադուլ հայտարարեցին, ներկայացրին մի շարք տնտեսական ու քաղաքական պահանջներ։

Այդ գործադուլը, որը մոտ երկու ամիս տևեց, վերջացավ բանվորների պարտությամբ։ Այդ գործադուլներից հետո ոստիկանությունը ավելի ուժեղացրեց ռեպրեսիաները։ Ստ. Շահումյանը ժամանակավորապես մեկնեց Ջալալ-օղլի (Ստեփանավան), ուր մնաց մինչև օգոստոսի կեսերը։ Այստեղ նա բեղմնավոր աշխատանք է տանում Հայաստանի (մասնավորապես Լոռու) բոլշևիկյան կազմակերպությունների ամրապնդման գործում։

Ստ. Շահումյանը Ջալալ-օղլիում երկար մնալ չէր կարող։ Իմպերիալիստական պատերազմի բռնկումը և քաղաքական դեպքերի արագ զարգացումը թելադրում էին նրան շուտափույթ մեկնել Բաքու՝ գլխավորելու բոլշևիկների պայքարը։

* * *

Անդրկովկասի բոլշևիկները՝ ղեկավարվելով լենինյան դրույթներով, պատերազմի առաջին իսկ օրից բռնեցին ճիշտ գիծ։ Պատերազմի դեմ վճռական պայքար ծավալվեց։ Ուժեղացնելով բացատրական աշխատանքը, բոլշևիկները մերկացնում էին պատերազմի թալանչիական բնույթը։ Հակադիր գիծ էին վարում մենշևիկները, էսեռները և այլ կեղծ սոցիալիստներ։ Բուրժուական նացիոնալիստների հետ դաշինք կապելով, նրանք թշնամություն էին սերմանում տարբեր ազգերի աշխատավորների միջև, հանդես էին գալիս ցարիզմի պաշտպանության լոզունգներով։ Մենշևիկների տխրահռչակ լիդեր Ն. Ժորդանիան իր մի շարք հոդվածներում բացահայտորեն հայտարարում էր, թե պատերազմի պայմաններում բանվորները պետք է հրաժարվեն դասակարգային պայքարից և միասնորեն պաշտպանեն «կայսրության անկախությունը»։

Անդրկովկասի բոլշևիկները ծանր պայմանների մեջ էին գտնվում։ Ամրապնդելով իրենց կազմակերպությունները թշնամիների դեմ մղվող համառ պայքարում, բոլշևիկները համախմբում էին բոլոր դեմոկրատական ու պրոգրեսիվ ուժերը։ Ստ. Շահումյանը այդ շրջանում հանդիստ չուներ. արհամարհելով բանտի, աքսորի վտանգը, Անդրկովկասի տարբեր վայրերում անց էր կացնում պարտիական խորհրդակցություններ, ուղղություն էր տալիս նրանց աշխատանքին, ելույթներ էր ունենում բանվորների միտինգներում, լուսաբանում էր բոլշևիկյան պարտիայի դիրքը պատերազմի և խաղաղության վերաբերյալ։ Նա պրակտիկ աշխատանքին սերտորեն զուգակցում էր մարքսիզմի թեորիական պրոպագանդան։ 1914—1916 թթ. նա գրել է մի շարք արժեքավոր հոդվածներ (Ն. Սուխանովի «Ինչո՞ւ ենք պատերազմում» գրքի վերաբերյալ գրախոսականը, «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը», «Ժորեսի մահը», «Վերջին դեպքերը Գերմանիայում» հոդվածները և այլն)։ Այդ հոդվածներում Շահումյանը գիտական խորությամբ քննում է մոնոպոլիստական կապիտալիզմի էությունը։ Նա ցույց է տալիս, որ իմպերիալիստական պատերազմները հետևանք են կապիտալիզմի անհամաչափ զարգացման։ Շահումյանի կարծիքով իմպերիալիզմի դարաշրջանում տեխնիկայի անհամաչափ ու թռիչքային զարգացումը խստորեն փոխում է կապիտալիստական երկրների տնտեսական-քաղաքական ու ռազմական հարաբերությունները։ Մյուս կողմից՝ հումքի աղբյուրների ոչ համաչափ բաշխումը սրում է հակասությունները կապիտալիստական երկրների միջև և արագաց-

նում պատերազմները։ Որպես կոնկրետ օրինակ նա մատնանշում է իմպերիալիստական պետությունների միջև կոնֆլիկտների սրումը Բալկանների հարցում։ Քննելով 2-րդ ինտերնացիոնալի քաղաքականությունը պատերազմի և խաղաղության վերաբերյալ, Շահումյանը ցույց է տալիս, որ Երկրորդ ինտերնացիոնալի պարագլուխները դավաճանեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարներին, փորձելով ցույց տալ, որ իբր պատերազմները հանդիսանում են ոչ թե կապիտալիստական սիստեմի, այլ, այսպես կոչված, առանձին անձանց շահադիտական նպատակների կամ կամայականության հետևանք։ Ստ. Շահումյանը ծաղրի է ենթարկում այդ անհեթեթ դրույթը։ Անդրկովկասի մենշևիկները, գովերգելով պաշտպանողական տակտիկան, բացահայտորեն հանդես եկան բոլշևիկների գծի դեմ, պաշտպանեցին «պատերազմը մինչև վերջը» բուրժուական ռեակցիոն լոզունգը։ Ստ. Շահումյանը անարգանքի սյունին է գամում մենշևիկներին և էսեռներին, ցույց է տալիս, որ նրանք ստոր գործունեությամբ օժանդակում են շովինիստներին։ Նացիոնալիստները, օգտվելով բնակչության ազգային կազմի բազմազանությունից և քաղաքական հետամնացությունից, ձգտում էին թուլացնել ռևոլյուցիոն ուժերը։ Այդ իսկ տեսակետից Լենինը Անդրկովկասի բոլշևիկների ուշադրությունը կենտրոնացնում էր նացիոնալիստների դեմ մղվող պայքարի վրա, նշելով այս խնդրի խոշոր նշանակությունը։ Նա բոլշևիկներից պահանջում էր ավելի խոր թափանցել բազմազգ աշխատավորների լայն խավերի մեջ և դաստիարակել նրանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով։

Ստ. Շահումյանը՝ ղեկավարվելով Լենինի ցուցմունքներով, զգալի աշխատանք է տանում այդ ուղղությամբ։ Նա գրեց մի շարք հոդվածներ, որտեղ մերկացրեց նացիոնալիստների հակաժողովրդական դեմքը։ Նա իր «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը», «Ժորեսի մահը», «Վերջին դեպքերը Գերմանիայում» հոդվածներում ցույց էր տալիս, որ նացիոնալիստները, թաքնվելով ազգային անկախության կեղծ ցուցանակի տակ, սերմանում են շովինիստական վարակը։ Դաշնակցության այդ ավանտյուրիստական քաղաքականությունը ջերմորեն պաշտպանում էր շովինիստական ինտելիգենցիան։ Ստեփան Շահումյանը «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» հոդվածում, մերկացնելով այդ ինտելիգենցիայի դեմքը, մատնանշում էր, որ այն իր գործունեությամբ վնասակար դեր է կատարում ժողովուրդների առաջադիմության գործում։ Շահումյանը մատնանշում էր, որ ինտելիգենցիան «իր ամբողջ գաղափարական ուժը ծառայեցնում է այսօր բուրժուազիայի շահերին, նա ամեն ջանք գործ է դնում գիտակցաբար և անգիտակցաբար կեղծելու հասարակական դիտությունը, հասարակական ճշմարտությունները, մթագնելու ժողովրդական մասսաների գիտակցությունը, արդարացնելու նրանց ստրաջ՝ զանազան աշխարհայացքների ու խաբեբայության միջոցով՝ շահագործության ու բռնության վրա հիմնված այժմյան հասարակարգը»[1]։

Բոլշևիկների նոանդուն աշխատանքի շնորհիվ նացիոնալիստները Կովկասի պրոլետարիատի շարքերում մի առանձին լուրջ ազդեցություն չունեցան։ Չնայած ցարական իշխանությունների դաժան հալածանքներին, Անդրկովկասի բոլշևիկները զգալի կազմակերպչական ու քաղաքական աշխատանք տարան նաև առաջադեմ ինտելիգենցիայի մեջ։ Այդ աշխատանքը պարտիայի կենտրո-

[1] Ս. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 393։

նական օրգան «Социал-демократ» թերթի և Լենինի հավանությանը արժանացավ»։ «Социал-демократ»-ը մատնանշում էր, որ Կովկասի բոլշևիկները Անդրկովկասի բարդ իրադրության պայմաններում տանում են ճիշտ գիծ և հաջողությամբ պաշտպանում Կովկասում ռևոլյուցիոն մարքսիզմի դրոշը այդ ծանր օրերին։ Նացիոնալիստների դեմ մղվող պայքարում լուրջ դեր է կատարել սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթը, ուր տպագրվել են Ստ. Շահումյանի «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը», «Վերջին դեպքերը Գերմանիայում», «Ժորեսի մահը», «Հայ գրականության ժողովածուի մասին», Ն. Սուխանովի «Ինչու ենք պատերազմում» գրքի մասին գրախոսականը, «Մեր Սուրենը» և այլ հոդվածներ։ Ցարական գրաքննությունը «Պայքար» թերթը պահում էր խիստ հսկողության տակ։ Չնայած խստություններին, Շահումյանը պրոֆեսիոնալ ռևոլյուցիոների և ժուռնալիստի հմտությամբ իր հոդվածներում պաշտպանում էր մարքսիստական պարտիայի թեորիան և տակտիկան։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների կյանքում խոշոր նշանակություն ունեցավ 1915 թ. հոկտեմբերին Բաքվում կայացած Անդրկովկասյան կազմակերպությունների խորհրդակցությունը, որը կոնֆերանսի նշանակություն ունեցավ։ Շահումյանի ղեկավարությամբ անցկացված խորհրդակցությունը քննարկեց ընթացիկ մոմենտը և պարտիայի խնդիրները։ Խորհրդակցությունը դատապարտեց Երկրորդ ինտերնացիոնալի և ցենտրիստների դիրքը, կոչ արեց բոլոր ազնիվ սոցիալ-դեմոկրատներին ուժեղացնել բացատրական աշխատանքը ազգաբնակչության մեջ, համախմբել դեմոկրատական ուժերը՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու Լենինյան լոզունգի շուրջը։ Խորհրդակցությունը, ամբողջովին միանալով ՌՍԴԲՊ Կենտկոմի մանիֆեստին, ընդունված բանաձևում նշում էր. «Գլխավոր դասը, որ ժողովուրդները պետք է քաղեն այս սոսկալի աղետից, այն է, որ միայն կապիտալիստական կարգի ոչնչացումը, նրա «բոլորի դեմ բոլորի պայքարի», այդ թվում և դասակարգերի դեմ դասակարգերի, պետությունների դեմ պետությունների պայքարի ռեժիմի հետ միասին,— և այդ կարգը սոցիալիստական կարգով փոխարինելը ժողովուրդներին կարող է փրկել հետագա գազանացումից և ինքնաբնաջնջումից և մարդկությունը դուրս բերել հետագա պրոգրեսի ուղին։

Այստեղից Եվրոպայի սոցիալիստական բոլոր պարտիաների հիմնական խնդիրն ներկայումս մենք համարում ենք սոցիալիստական ռևոլյուցիայի ուժգին պրոպագանդան»[1]։ Այնուհետև բանաձևում մատնանշվում էին այն կոնկրետ միջոցառումները, որոնք պետք է արագացնեին ցարիզմի տապալումը երկրում և համաժողովրդական դեմոկրատական ռեսպուբլիկայի ստեղծումը։ Խորհրդակցությունը կոչ է անում Եվրոպայի սոցիալ-դեմոկրատական պարտիաների ձախ թևին հարազատ մնալ պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարներին, ամրապնդել միջազգային պրոլետարիատի միասնությունը որպես կապիտալիստական կարգերի տապալման կարևոր պայմանը։

Խորհրդակցության որոշումներում մատնանշված է մարքսիստական պարտիայի դիրքը ոչ պրոլետարական պարտիաների նկատմամբ։ Այնտեղ ընդգծվում է, որ մենշևիկները, էսեռները և ամեն տեսակ կեղծ սոցիալիստները, սարսափ զգալով Ռուսաստանի բանվոր դասակարգից, կառչում են միապետությանը։ «Այս ամենը,— գրված է բանաձևում,— ցույց է տալիս, որ Ռուսաստանի

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 351։

բանվոր դասակարգին անհրաժեշտ է, դաշն կնքած գյուղացիական ու քաղաքային դեմոկրատիայի ավելի վճռական տարրերի հետ, վճռական պայքար մղել բուրժուական-ազնվականական բլոկի դեմ և պատրաստվել քաղաքացիական պատերազմի ազնվականության և խոշոր բուրժուազիայի դեմ»[1]։ Նույնքան կարևոր նշանակություն ուներ նաև խորհրդակցության կողմից ընդունված բանաձևը ազգային հարցի մասին (Շահումյանի տված զեկուցման շուրջը)։ Խորհրդակցությունը դատապարտում է բուրժուական նացիոնալիստների և նրանց համակրող սոցիալ-դեմոկրատ ինտելիգենտ գրչակների ոճրագործ պրոպագանդան և կոչ է անում բոլոր պրոգրեսիվ տարրերին պաշտպանել և ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը։

Խորհրդակցության արդյունքների մասին Ստ. Շահումյանը հաղորդում է Լենինին։ Շահումյանին գրած նամակներից մեկում Լենինը ողջունում է խորհրդակցության որոշումները և ցուցմունքներ է տալիս հետագա աշխատանքի համար։ Խորհրդակցության կողմից ընտրված Կովկասյան երկրային բյուրոն (որի նախագահը Շահումյանն էր) բազմացնում է այդ որոշումները և ուղարկում տեղական կազմակերպություններին։ Միանգամայն այլ հունով ընթացավ Գուրիայում տեղի ունեցած մենշևիկ-լիկվիդատորների խորհրդակցությունը։ Խորհրդակցության բանաձևերը բացահայտորեն պաշտպանում են իմպերիալիստական պատերազմը։

Լենինին գրած նամակում Շահումյանը մատնանշում է, որ մենշևիկները Ն. Ժորդանիայի գլխավորությամբ պաշտպանում են բուրժուական նացիոնալիստներին և ջանում են աշխատավորներին քարշ տալ այդ ուղին։

Բոլշևիկները բանվորների և գյուղացիների մեջ տարածեցին բազմաթիվ թռուցիկներ, կոչեր, որոնք ունեցան որոշակի դրական արդյունք։ 1915 թ. հոկտեմբերին Երկրային բյուրոն մի թռուցիկով դիմեց երկրամասի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին, ուր պարզաբանում էր պատերազմի ավերիչ բնույթը, նրա նպատակները և աշխատավորներին կոչ անում իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի։ Այդ թռուցիկում (որը գրել էր Ստ. Շահումյանը) մատնանշված է. «Ոտար երկրներում թշնամիներ մի փնտրեք։ Ժողովրդի ամենաոխերիմ թշնամին ցարիզմն է...»։ Եթե դուք ուզում եք պատերազմներ չլինեն և ձեզ ընտանիքից ու հայրենի օջախից չզրկեն, եթե դուք գտնում եք, որ մարդկանց երջանկությունը ազատ ու խաղաղ կյանքի մեջ է, ապա դուրս եկեք ցարիզմի դեմ։ Ձեզ զինել են, այդ զենքը դարձրե՛ք ժողովրդի թշնամիների դեմ։ Թալանչիական պատերազմից դուրս գալու միակ ելքը՝ այն համաժողովրդական ազատագրական պատերազմի վերածելն է։ Ուրեմն հանուն ազատության ու խաղաղ կյանքի դուրս եկե՛ք համաժողովրդական պայքարի»[2]։

Շահումյանը՝ որպես ՌՍԴԲՊ Կովկասյան երկրային բյուրոյի ղեկավար, իր գինակիցների հետ զգալի աշխատանք է տանում բոլշևիկյան և բանվորական կազմակերպությունների ամրապնդման համար։ Նա շրջագայում է երկրամասի մի շարք վայրեր, հրավիրում է տեղերում պարտիական խորհրդակցություններ, ուղղություն է տալիս նրանց՝ ռևոլյուցիայի թշնամիների դեմ մղվող պայքարում։ Այդ բոլորի մասին նա միշտ տեղյակ էր պահում Լենինին։ Իր նա-

[1] Ստ. Շահում ան. Երկեր, հատ. 2, էջ 353։

[2] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Ադրբեջանական ֆիլիալի արխիվ, ֆ. 550։

մակներից մեկում նա Լենինին գրում էր, որ տեղերում՝ Քութաիսում, Թիֆլիսում և այլ շրջաններում վերականգնվել ու ամրապնդվել են կազմակերպությունները, և թերթ հրատարակելը օրվա խնդիր է դարձել։ Վերին աստիճանի ուշագրավ է Շահումյանի 1915 թ. հոկտեմբերի վերջին Լենինին գրած նամակը, ուր նա հայտնում է, որ Անդրկովկասի բոլշևիկները՝ հարազատ մնալով պրոլետարիատի մեծ ուսմունքին, պայքար են տանում դավաճանների դեմ։ Նա այդ նամակում գրում է. «...թույլ եմ տալիս կարծելու, որ ես և մեր բոլոր ազգականները (բոլշևիկները) բարձր ենք պահում մեր ընտանեկան (այսինքն պարտիայի) դրոշակը, և դուք կարող եք մեր ռեպուտացիայի համար հանգիստ լինել»[1]։ Նա ափսոսանք է հայտնում, որ ստեղծված դժվարությունների պատճառով հնարավորություններ չկան մշտական կապի համար։ «Ինչքա՜ն շատ հարցեր կան, որոնց մասին ես կուզեի ավելի կոնկրետ գրել Ձեզ և հարցնել Ձեր խորհուրդը, բայց ցավոք սրտի չեմ կարող»[2],—գրում է նա Լենինին։ Շահումյանը հայտնում է, որ չնայած ոստիկանական ռեպրեսիաներին ու ձերբակալություններին, բոլշևիկյան կազմակերպությունները նացիոնալիստների ու լիկվիդատորների դեմ մղվող համառ պայքարում իրենց շուրջն են համախմբում բանվորական մասսաներին։ Այդ աշխատանքի շնորհիվ պաշտպանողականների ազդեցությունը խիստ թուլացել էր։

Որպես օրինակ Շահումյանը նշում էր այն փաստը, որ Ն. Ժորդանիայի բոլոր ձեռնարկումները՝ մենշևիկյան տակտիկան անցկացնելու գործում ձախողման ենթարկվեցին Բաքվում։ Շահումյանը հույս է հայտնում, որ՝ չնայած ստեղծված դժվարին դրության, իրենք կշարունակեն համառ պայքար տանել պատերազմի ու նրա պաշտպանների դեմ և այդ պայքարում կունենան փայլուն հաջողություններ։ Բոլշևիկների հեղինակության աճը ոստիկանությանը իրարանցման մեջ էր գցել։ Նրա գործակալները հետապնդում էին անլեգալ կազմակերպությունները, ձգտում էին հայտնաբերել բոլշևիկներին։ Այդ ավելի ուժեղացավ 1916 թ. փետրվարին, երբ Բաքվի 50 000 բանվորներ գործադուլ հայտարարեցին։ Այդ օրերին ոստիկանությունը ձերբակալեց մի խումբ բոլշևիկների և ակտիվ բանվորների։ Ստ. Շահումյանը ստիպված մեկնեց Գրոզնի։ Բայց այնտեղ նա ձերբակալվեց և փոխադրվեց Բաքվի բանտը։

Բաքվի ոստիկանության բաժնի պետը դեպարտամենտին ուղարկած զեկուցագրում Շահումյանի մասին հայտնում էր, որ «...Տեղի սոցիալ-դեմոկրատական մեծամասնության ղեկավարը հանդիսանում է Ս. Գ. Շահումյանը (Շահումով), որը վերջերս Գրոզնիից փոխադրվեց Բաքու։ Նա սոցիալ-դեմոկրատների հայտնի լիդերներից է, որը մի քանի անգամ ձերբակալվել ու աքսորվել է։

...Գործակալության վերջին տեղեկությունների համաձայն, Շահումյանը համարվում է ամենից զարգացած և փորձված աշխատողը, որի հետ կապված են բոլոր շրջանները և պարտիական ականավոր դեմքերը, որ ապրում են արտասահմանում։ Նա համոզված բոլշևիկ է և հայտնի Լենինի կողմնակից, որի հետ գտնվում է սերտ գրագրության մեջ։ Ըստ գործակալության տեղեկությունների նա վերին աստիճանի զգույշ և փորձված գործիչ է։ Նա իր մոտ ոչ մի վարկաբեկիչ փաստաթուղթ չի պահում, որի պատճառով խուզարկությունները անցնում են ապարդյուն։ Գործակալության կարծիքով, նրան Կովկասի սահ-

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 319։
[2] Նույն տեղում։

մաններից հեռացնելը հանգստություն կմտցնի ոչ միայն տեղական կյանքում, այլև ընդհանրապես Կովկասի բոլոր շրջաններում։ Հայտնում եմ, որ ս/թ. մարտի 7-ին Գրոզնի քաղաքում Շահումյանը ենթարկվեց կալանքի և այժմ տեղափոխվել է տեղի բանտը։

Ընդապետ (ստորագրություն)»[1]։

Ստ. Շահումյանը տաս ամիս նստեց Բաքվի բանտում։ 1916 թ. աշնանը նրան աքսորեցին (ցմահ) Սարատովի նահանգը, որտեղից նա ազատվեց 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակից հետո։ Աքսորում նա կապվում է տեղի բոլշևիկյան կազմակերպության հետ և պարտիական աշխատանք է տանում։ Ստ. Շահումյանը 1917 թ. մարտին վերադառնում է Բաքու և գլխավորում պարտիական կազմակերպությունների պայքարը սոցիալիստական ռևոլյուցիայի նախապատրաստման ու անցկացման համար։

---

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7։